CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºî àôÂÚ²Ü
Îº Üî ðàÜ² Î²Ü ´²ÜÎ
Ü² Ê²¶²Ð

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 583 841
Fax: (37410) 565 496

0010, ºñ¨³Ý, ì³½·»Ý ê³ñ·ëï³Ý, 6
Ð»é.ª (37410) 583 841
ü³ùëª (37410) 565 496

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

26.04.2019թ. N 08-04/000319-19
Ձեր N

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
պարոն Նիկոլ Փաշինյանին

Մեծարգո պարոն Վարչապետ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 53 Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը:

Առդիր՝ 5 թերթ:

X

Հարգանքով՝

Արթուր Ջավադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0053 Ա. 26.04.19

26 ապրիլի 2019 թվականի թիվ 53 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

2019 թ. ապրիլի 26
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

Մակրոտնտեսական հատված. 2018 թվականին, Հայաստանի տնտեսական զարգացումներն ընթացել են մակրոտնտեսական կայունության պահպանման ներքո, և 2018 թվականի տնտեսական աճը թեև դանդաղել է նախորդ տարվա համեմատ, սակայն փոքր-ինչ գերազանցել է ՀՀ պետական բյուջեի տարեկան ծրագրում նպատակադրված (4.9 տոկոս) մակարդակը՝ կազմելով 5.2 տոկոս: Տնտեսական աճը պայմանավորվել է հիմնականում ծառայությունների ու առևտրի ճյուղի բարձր աճով, ինչպես նաև արդյունաբերության և շինարարության ոլորտներում արձանագրված աճերով: Գյուղատնտեսության ճյուղում արձանագրվել է նվազում, որը սակայն նախորդ տարվա համեմատ ավելի փոքր է եղել:

Ինչ վերաբերում է պետական հատվածին, ապա հարկաբյուջետային քաղաքականությունն, առաջնորդվելով նոր ներդրված հարկաբյուջետային կանոնների պահպանման սկզբունքով և հիմնական շեշտը դնելով պետական պարտքի կայունացման վրա, ապահովել է ներդրած կանոնին համահունչ Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի կրճատում: Վերջինիս, նախևառաջ նպաստել է 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսված պակասուրդի կրճատումը: Մյուս կողմից, նպաստել է նաև պետական ծախսերի ոլորտում, տարվա ընթացքում Կառավարության կողմից կրճատման ուղղությամբ վերանայումների իրականացումը, որոնց նպատակն էր պետական ծախսերի կատարման գործընթացի բարելավման և կարգապահության բարձրացման միջոցով նպաստել ծախսերի արդյունավետության բարձրացմանը: Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդը նվազել է և կազմել ավելի ցածր, քան նախատեսված էր 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով: Ինչ վերաբերում է համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությանը, ապա Ֆինանսների նախարարության գնահատմամբ, հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը կազմել է 2.3 տոկոս զսպող, որը պայմանավորվել է և՛ եկամուտների, և՛ ծախսերի զսպող ազդակների ձևավորմամբ:

Զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում Կենտրոնական բանկն արձագանքել է՝ վարելով նախատեսվածից ավելի խթանող դրամավարկային քաղաքականություն՝ պահպանելով տոկոսադրույքների ցածր մակարդակը: Սա թույլ է տվել մասամբ չեզոքացնել պահանջարկի նվազումը շուկայական տոկոսադրույքների շարունակվող նվազման և վարկավորման բարձր աճի միջոցով: Արդյունքում, 2018

[1]Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները վերցված են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունից:

թվականի տնտեսական աճի ձևավորմանը մեծապես նպաստել են մասնավոր ծախսումների բարձր աճը՝ 10.3 տոկոս:

2018 թվականի տնտեսական աճին արտաքին հատվածի զարգացումները, ընդհանուր առմամբ, բացասական նպաստում են ունեցել: Այսպես, զուտ արտահանման նպաստումը տնտեսական աճին եղել է բացասական, քանի որ սպառման և ներդրումների աճը ներքին տնտեսությունում զուգորդվել է ներմուծման իրական ծավալների նշանակալի՝ 10.9 տոկոս աճով: Վերջինս զգալիորեն գերազանցել է արտահանման իրական աճի 5.2 տոկոս մակարդակը, ինչը արձանագրել է էական դանդաղում՝ պայմանավորված հանքարդյունաբերության ճյուղում առաջացած խնդիրներով: ՀՀ արտաքին պահանջարկին բացասական է նպաստել նաև հարևան երկրների (ՌԴ, Թուրքիա, Իրան) նկատմամբ տարբեր պատժամիջոցների խստացումը և դրանց հետևանքով տեղ գտած ազգային արժույթների հարաբերական արժեզրկումը: Վերջինիս ազդեցությունը, սակայն, աստիճանաբար չեզոքացնում է ՀՀ-ում հարաբերականորեն ցածր գնաճը այդ երկրների համեմատ: Մյուս կողմից հարկ է փաստել նաև, որ ներմուծման աճի բարձր մակարդակն ուղեկցվել է կառուցվածքային դրական փոփոխություններով: Մասնավորապես ներմուծված ապրանքների կազմում շարունակել են աճել ներդրումային ապրանքների իրական ծավալները:

Անդրադառնալով գնաճին, նշենք, որ 2018 թվականի հարկաբյուջետային **զսպող քաղաքականության արդյունքում ներքին պահանջարկի դանդաղման, ինչպես նաև արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ազդեցությունների թուլացմամբ** պայմանավորված գնաճը պահպանվել է ցածր մակարդակում՝ միջինում կազմելով 2.5 տոկոս, իսկ տարեվերջին 12-ամսյա գնաճը գտնվել է 1.8 տոկոս մակարդակում: Տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, պահպանված ցածր գնաճային միջավայրը նպաստել է գնաճային սպասումների թուլացմանը, որն էլ իր հերթին արտացոլվել է նաև շուկայական տոկոսադրույքների նվազմամբ. տարվա ընթացքում նվազել են ինչպես պետական պարտատոմսերի եկամտաբերությունը (այն պարագայում, երբ բյուջեի պակասուրդի աղբյուրներում աճել է պարտատոմսերի հաշվին ֆինանսավորման տեսակարար կշիռը), այնպես էլ վարկավորման տոկոսադրույքները:

Հարկաբյուջետային հատված. Հարկաբյուջետային զսպող քաղաքականությունն ուղեկցվել է ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նախատեսվածից ավելի ցածր մակարդակի ձևավորմամբ, որի պարագայում այն կազմել է ՀՆԱ-ի 51.4 տոկոսը՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով շուրջ 2.3 տոկոսային կետով: Ընդ որում, վերջինս ուղեկցվել է ներքին պարտքի՝ վերջին տարիներին արձանագրվող տեսակարար կշռի աճի միտումների պահպանմամբ: Հարկ է փաստել, որ շուկայական տոկոսադրույքների նվազման վերջին տարիներին ձևավորված միտումները բարենպաստ պայմաններ են ստեղծել պարտքի կառավարման ռազմավարության իրականացման համար՝ շարունակելով առավել մեծ ուշադրություն դարձնել բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի

ավելացմանը: Վերջինս կարևոր գործոն է պետական պարտքի հետ կապված ռիսկերի՝ հատկապես արժութային ռիսկի նվազեցման համար:

ՀՀ տնտեսական ակտիվության բարձր մակարդակի պայմաններում, ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները նախորդ տարվա նկատմամբ աճել են 13.8 տոկոսով, իսկ հարկային եկամուտները՝ 14.4 տոկոսով[2]: Ընդ որում, հարկային եկամուտների աճի ապահովմանը նպաստել է նաև հարկերի հավաքագրման ոլորտում վարչարարական միջոցառումների իրականացումը, որի արդյունավետության մասին են վկայում՝ մասնավորապես բյուջե հավաքագրվող հարկերի աճի պայմաններում տեղ գտած գերավճարների նվազումը և տնտեսվարողներին ավելացված արժեքի հարկի հետ վերադարձվող գումարների աճը: Այսպես, հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2018 թվականին կազմել է 21 տոկոս, իսկ հարկերի միասնական հաշվի զուտ մուտքը հաշվի առած՝ 21.8 տոկոս, որը 0.5 տոկոսային կետով գերազանցում է կանխատեսված և 1.3 տոկոսային կետով՝ 2017 թվականի համապատասխան ցուցանիշը:

2018 թվականին ՀՀ նոր կառավարության կողմից որդեգրված ծախսերի արդյունավետության բարձրացման քաղաքականությունը մեծամասամբ արտահայտվել է պետական ծախսերի կրճատմամբ: Եվ չնայած ծախսերի կրճատումը զսպող դերակատարություն է ունեցել տնտեսական պահանջարկի տեսանկյունից, սակայն ենթադրվում է, որ նման ռազմավարության շարունակականության ապահովումը դրականորեն կնպաստի պետական ծախսերի տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Այսպես, տարվա արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերը նվազել են 2.8 տոկոսով, որը ՀՆԱ-ի անվանական մեծությամբ՝ 7.8 տոկոս աճի պայմաններում հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը՝ կազմելով 24.1 տոկոս՝ 2017 թվականի 26.7 տոկոսի և կանխատեսված 25 տոկոսի դիմաց[3]: Պետական բյուջեի ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 94.7 տոկոսով, ընդ որում, ծրագրից շեղումը գրեթե հավասար չափով բաժին է ընկել և ընթացիկ, և կապիտալ ծախսերին: Վերջինս կազմել է ՀՆԱ-ի 2.5 տոկոսը՝ զգալիորեն զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշին:

Այսպիսով, հարկաբյուջետային զսպող քաղաքականության, պետական ծախսային ռազմավարության վերանայման և հարկային վարչարարության բարելավման արդյունքում, 2018 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա համեմատ էապես նվազել է և կազմել 105.4 մլրդ դրամ՝ ծրագրված 161.9 մլրդ դրամի փոխարեն: Նման պայմաններում նվազել է ՀՆԱ-ում բյուջեի պակասուրդի տեսակարար

---

[2] 2017 և 2018 թվականների պետական բյուջեի եկամուտների համեմատությունը ներկայացվում է համադրելի ցուցանիշների միջև, մասնավորապես՝ 2017 թվականի եկամուտները նվազեցվել են ԱԱՀ-ի վերադարձված գումարների (16.6 մլրդ դրամի) չափով, որն իրականացվել էր ծախսերի միջոցով, իսկ 2018 թվականի եկամուտներն ավելացվել են հարկերի միասնական հաշվի զուտ մուտքի (48.1 մլրդ դրամի) չափով:

[3] Առանց ԱԱՀ-ի վերադարձված գումարների՝ 2017 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 2.8%-ով՝ 41.1 մլրդ դրամով նվազում:

կշիռը՝ նախորդ տարվա համեմատ 3.0 տոկոսային կետով, և կազմել ՀՆԱ-ի 1.8 տոկոսը (կանխատեսվել էր 2.7 տոկոս): Անդրադառնալով ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներին, նշենք, որ 2018 թվականին զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը՝ ի հաշիվ ներքին աղբյուրների տեսակարար կշռի էական աճի: Ընդ որում, շուկայական տոկոսադրույքների նվազման վերջին տարիներին նկատված միտումներն իրենց արտացոլումն են գտել նաև պարտքի տոկոսադրույքների նվազման վարքագծում:

Ամփոփում. Ամփոփելով նշենք, որ 2018 թվականի պակասուրդի կրճատումը, ստվերային տնտեսության կրճատումը և ծախսային քաղաքականության բարեփոխումները դրական են արտահայտվել պարտքի և մակրոտնտեսական կայունության ապահովման, ինչպես նաև տնտեսական միջավայրի բարելավման և կայուն տնտեսական աճի հիմքերի ապահովման համար: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ կայուն տնտեսական աճի համար նաև շատ կարևոր է ապահովել տնտեսությանն անհրաժեշտ արդյունավետ պետական կապիտալ ներդրումներ՝ բնականաբար պահպանելով հարկաբյուջետային կանոններով ամրագրված պետական պարտքի կայունությունը: